460 տողից բաղկացած մի չափաբան պատմութիւն է, որ մենք Պատմական վիպասանութիւն անուանեցինք և որը ամփոփում է իւր մէջ Լանկթամուրի և այլ բռնակալների օրով՝ 1386—1422 թուերին Հայաստան տեղի ունեցած զարհուրելի կոտորածների և տառապանքների տխուր անցքերը՝ ժամանակակից երիտասարդ նաև ականատես մատենագրի ճշմարտապատում և սրտաշարժ նկարագրութեամբ։ Զը նայած իւր չափաբերական ձևին և բանաստեղծական պարագաներին՝ այս երկը պատմական մեծ արժէք ունի ի միջի այլոց և այն պատճառով, որ նա նոյն ժամանակի պատմագիր Թոմա Մեծոփեցուց աւելի վաղ է գրուած և տեղ տեղ զեղեցիկ կերպով ստուգում ու լրացնում է սորան։

Մեր վիպասանութիւնը պահպանուել է Արզուին քաղաքի Լուսաւորչայ Հայոց եկեղեցում գտնուած բոլորտիքը գրչագիր ձայնքաղ Գանձարանի մէջ՝ յիշատակարանի վերջը, որից իմացուում է, որ գրչագիրը գրուած է Վան քաղաքում՝ Հայոց ՋԺԱ = 1462 թուին — ուրեմն Ղալաթեցու մահից 37 տարի յետոյ։ Ես ընդօրինակել եմ ստուել այս գրուածքը յիշատակի արժանի հանգուցեալ Գրիգորիս Արքեպիսկոպոս Աղուանեանցի 1886 թ. ինձ ուղարկած «Տոմար արձանագրութեան» մի տետ-